ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2018թվական N 56-Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ -9 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով , համայնքի ավագանին որոշում է՝

1.ՀԱՍՏԱՏԵԼ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՏԵՍՔՈՎ՝

1) ԹԱԼԻՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019Թ.ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԻՐԱՁԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳ ՈՒ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6) ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7) ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ և ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ , ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8) ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9) << ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> 21.11.2018Թ. N 53-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10) <<ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>17.08.2017Թ. N 30-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12) ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի՝ 10 ԿՎՏ ԵՎ Գ. ԱՎԴԱԼՅԱՆ Ի ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ ՀՈԱԿ-Ի՝ 5 ԿՎՏ, ՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ԿՆՔՎԵԼԻՔ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

13) ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ Գ.ԱՎԴԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ ՀՈԱԿ-ՈՒՄ՝ ԱՐԵՎԱՅԻՆ ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ԿՆՔՎԵԼԻՔ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

14) ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ Թ. ԿՐՊԵՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ԿՆՔՎԵԼԻՔ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

15)ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամ Արամյան

2.Գաբրիել Ավետիսյան

3.Մարտուն Գալստյան

4.Նարեկ Գրիգորյան

5.Արարատ Գասպարյան

6.Աշոտ Գրիգորյան

7.Թամարա Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՄՅԱՆ

Ք. Թալին
26 դեկտեմբերի 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2018թվական N 57-Ն

ԹԱԼԻՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019Թ.ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >>ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և 19-րդ կետի , <<Տեղական տուրքերի և վճարների մասին >> ՀՀ օրենքի
9-րդ , 10-րդ , 12-րդ և 14-րդ հոդվածների և << Աղբահանության և սանիտարական մաքրման մասին >> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով , համայնքի ավագանին որոշում է՝
1.Հաստատել Թալին քաղաքի վարչական տարածքում 2019թ. տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը համաձայն կից հավելվածի
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամ Արամյան

2.Գաբրիել Ավետիսյան

3.Մարտուն Գալստյան

4.Նարեկ Գրիգորյան

5.Արարատ Գասպարյան

6.Աշոտ Գրիրգորյան

7.Թամարա Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՍՅԱՆ

Ք. Թալին
26 դեկտեմբերի 2018թ.

Հավելված
Հաստատված է համայնքի ավագանու
26.12.2018թ. N 57-Ն որոշմամբ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019Թ. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓ /դրամ/
1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.	
ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝	
մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար.	15000
բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝	
__200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	30000
__500-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	50000
___3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	100000
գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝	
__Մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	3000
___20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	5000
2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով	

՝ ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝	3000
բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով	
գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.	
3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝	5000
4) Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար/ կիրառվել է 0.75գործակից /	150000
5) Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար ՝ /կիրառվել է 0.75 գործակից /	45000
6) Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	50000
7) Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար	
ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար	
___մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	6000
___26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	12000
____50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ	16000

ոմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	
___100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	22000
___200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	28000
____500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	48000
բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար	
___մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	6000
___26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	12000
___50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և 14000 ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	16000
__100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	22000
___200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	28000
___500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	48000
8) Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի հաշվով	350
9) Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	
ա. առևտրի օբյեկտների համար՝	25000
բ.հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար	100000
գ. բաղնիքների (սաունաների) համար՝	200000
դ. խաղատների համար՝	500000
ե. շահումով խաղերի համար՝	250000
զ. վիճակախաղերի համար	100000

10) Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝	
Հիմնական շինությունների ներսում ՝	
___մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	4000
____26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	8000
____50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	12000
---100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	16000
---200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի՝ համար՝	24000
- --500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	32000
բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝	
___մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	1000
___26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	2000
____50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	4000
____100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	8000
____200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	12000
_____ 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	16000
11) Քաղաքային բնակավայրերում ավազանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝օրացույցային տարվա համար ՝ /կիրառվել է 0.5 գործակից/	2500
12) Ավազանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող	

գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝	
ա.ալկոհոլային և սպիրտի պարունակությունը մինրև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար //կիրառվել է 0.75 գործակից/	1500
բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝/կիրառվել է 0.75 գործակից/	2625
գ.սոցիալական գովազդի համար ՝	0
դ. այլ արտաքին գովազդի համար՝՝/կիրառվել է 0.75 գործակից/	1125
ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,	282
զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.	113
13) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	100000
14) Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝՝/կիրառվել է 0.75 գործակից/	7500
15) Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝՝ /կիրառվել է 0.5 գործակից/	250000
16)Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար , օրացույցային տարվա համար ՝	
ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար ՝	2.500.000
բ. 5հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	5000000
գ.7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	7000000
դ.10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար	10000000

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ	ԴՐԱՄ
1) Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	10000
2) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	10000
3) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	10000
4) Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	5000
5) Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	5000
6)Թալինի Կոմունալ ծառայություն ՀՈԱԿ-ի կողմից աղբահանության վճար՝ կենցաղային աղբի համար , համայնքում հաշվառված կամ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ կամ ըստ բնակարանը ընդհանուր մակերեսի 16 մ –ի համար	150 10
7) Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը սահմանվում է՝	
ա. Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի 1 խմ աղբի համար	3000
բ. Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ կշռի 1 տոննա աղբի համար	10000
8.Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և / կամ / շինություններում , այդ թվում հասարակական և արտադրական շենքերում կամ շինություններում աղբահանության վճարը ըստ շինության ընդհանուր մակերեսի սահմանվում է՝	
ա.առևտրի /այդ թվում շուկաների / , հանրային սննդի և բնակչության սպասարման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով 1 քմ համար ամսական	50

բ.հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ , ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով ՝ 1 քմ համար ամսական	20
գ.արտադրական , արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով ՝ 1 քմ մակերեսի համար ՝ ամսական	5
դ.կրթական , մշակութային , առողջապահական , սպորտային , գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական նշանակության շինությունների մասով ՝ 1 քմ մակերեսի համար	3
ե.շինություններում , որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկվում է տնտեսական գործունեության համար սույն որոշմամբ սահմանված առավել բարձր դրույքաչափով :	
9)Համայնքի սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների , համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար վճար	2000
10.Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով ամսական	6000
11) Համայնքային ենթակայության արտադպրոցական հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով սահմանել տեղական վճար ՝	
ա.Թալինի երաժշտական դպրոցում սովորելու համար ամսական	4000
բ.Թալինի գեղարվեստի դպրոցում սովորելու համար ամսական	3000
գ.Թալինի Գ. Ավդալյանի անվան մարզադպրոցում -----մարզվող երեխաների համար ամսական -----մարզական խմբերի համար ամսական -----ջեռուցման սեզոնին ամսական -----մարզասարքերով անհատական մարզվող քաղաքացիների համար , մեկ ժամը -----մարզասրահը խաղերի կամ մարզումների համար տրամադրելու դեպքում 1 ժամը	 2000 20000 30000 300 2000
դ. Թալինի մշակույթի կենտրոնի ՝ -----գործող պարի խմբերում սովորելու համար -----մշակութային միջոցառումների անցկացման նպատակով դահլիճը տրամադրելու համար 1 ժամը --ժողովների կամ հավաքների նպատակով դահլիճը տրամադրելու համար 1 ժամը --պետական , բարեգործական և դրանց համարժեք միջոցառումների համար դահլիճը տրամադրելու համար	 0 5000 20000 0
12) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ մինչև հազար դրամ փոխհատուցման վճար:	1000
13) Անշարժ գույքի օբյեկտին (հողամաս, տուն) նոր հասցեի տրամադրման, անշարժ գույքի, օբյեկտի վերահասցեավորման վճար	2000

14)Համայնքը սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով տեղական վճար՝	
ա.խոշոր եղջերավոր անասունների մեկ գլխի համար բ.մանր եղջերավոր անասունների մեկ գլխի համար	100 50

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2018թվական N 58-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով , նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը , համայնքի ավագանին որոշում է `

1.Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքում տնային կենդանիներ պահելու համաքաղաքային կանոնները ` համաձայն հավելվածի :

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամ Արամյան

2.Գաբրիել Ավետիսյան

3.Մարտուն Գալստյան

4.Նարեկ Գրիգորյան

5.Արարատ Գասպարյան

6.Աշոտ Գրիրգորյան

7.Թամարա Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՄՅԱՆ

Ք. Թալին
26 դեկտեմբերի 2018թ.

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ավագանու
2018թ. դեկտեմբերի 26-ի թիվ 58-Ն որոշման

ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ

I. Ընդհանուր դրույթներ

1. Թալին համայնքում տնային կենդանիներ պահելու համաքաղաքային կանոններով (այսուհետ՝ Կանոններ) կարգավորվում են Թալին քաղաքի վարչական տարածքում տնային կենդանիներին հաշվառելու, պահելու հետ կապված հարաբերությունները, և տարածվում են Թալին քաղաքի տարածքում գտնվող տնային կենդանիներ տիրապետող (պահող) ֆիզիկական և իրավաբանական անձանց վրա:
2. Կանոնները չեն տարածվում ծառայողական նպատակներով տնային կենդանիներին օգտագործող և պահող համապատասխան թույլտվություն ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց վրա:
3. Սույն կանոններում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝
   1) **տնային կենդանի** (այսուհետ՝ կենդանի)՝ մարդու կողմից պատմականորեն ընտելացված կենդանի.
   2) **տնային կենդանի տիրապետող** (այսուհետ՝ տիրապետող)՝ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, ում հսկողության և (կամ) խնամքի ներքո գտնվում է կենդանին:

II. Տիրապետողի իրավունքները և պարտականությունները

4. **Տիրապետողն իրավունք ունի՝**
   1) հիմնել կենդանիների տիրապետողների կազմակերպություն և (կամ) անդամակցել դրան.
   2) ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն կենդանուն հաշվառելու և պահելու հետ կապված հարցերի վերաբերյալ.
   3) սույն կանոններով նախատեսված այլ իրավունքներ:
5. **Տիրապետողը պարտավոր է՝**
   1) սույն կանոններին համապատասխան իրականացնել նոր ձեռք բերված կենդանու հաշվառումը.
   2) կենդանուն պահել դրա կենսաբանական ու անհատական առանձնահատկություններին համապատասխան և ապահովել սննդի, ջրի, քնի, շարժման, բնական ակտիվության նկատմամբ նրանց պահանջները.
   3) պահպանել կենդանուն պահելու սանիտարահիգիենիկ կանոնները, այդ թվում՝ իրականացնել կենդանու տարեկան պատվաստումը կատաղության դեմ.
   4) անհապաղ անասնաբուժական կամ առողջապահության կազմակերպություններին հայտնել կենդանու կողմից մարդու կամ այլ կենդանու առողջությանը վնաս հասցնելու մասին՝ կենդանուն տեղափոխելով մոտակա անասնաբուժական կազմակերպություն՝ զննման և կարանտինային հսկողություն իրականացնելու համար.

5) անհապաղ անասնաբուժական կազմակերպությանը հայտնել կենդանու կատաղության հիվանդության կասկածի մասին և մինչ անասնաբույժ-մասնագետի ժամանումը մեկուսացնել կենդանուն.
6) կենդանու հիվանդությունների կանխման նպատակով իրականացնել սանիտարահիգիենիկ միջոցառումներ.
7) բացառել կենդանու կողմից ընդհանուր օգտագործման տարածքների, բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների, բակերի, մայթերի, փողոցների, սիզամարգերի, ինչպես նաև հանգստյան կանաչ գոտիների աղտոտումը.
8) կենդանուն պահելուց հրաժարվելու դեպքում այն փոխանցել այլ անձի, այդ մասին տեղեկացնելով հաշվառող մարմնին: Արգելվում է կենդանուն թողնել առանց հսկողության.
9) կենդանի պահելու համար ձեռք բերել համապատասխան թույլտվություն՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.
10) ապահովել յուրաքանչյուր անձի անվտանգությունը և անդորրը կենդանու ազդեցությունից, այդ թվում՝ առանց դնչկալի կամ վնասազերծման ապահովման դուրս հանելը.
11) պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոններով տիրապետողի համար սահմանված այլ նորմերը և կանոնները:

III. Կենդանիների հաշվառումը

6. Կենդանիների հաշվառումն իրականացվում է մարդկանց և կենդանիների համար հատկապես վտանգավոր և վարակիչ հիվանդությունների հայտնաբերման, վարակված կենդանիների հայտնաբերման ու պրոֆիլակտիկայի ենթարկելու համար:
7. Կենդանիներն հաշվառման են ենթակա սկսած վեց ամսական հասակից:
8. Հաշվառման ենթակա չեն մանր կենդանիներն ու թռչունները, որոնք պահվում են դեկորատիվ նպատակով:
9. Հաշվառումն իրականացնում է համայնքի ղեկավարը՝ կենդանիների քանակի և դրանց կուտակումների վերաբերյալ օբյեկտիվ տեղեկությունների հավաքագրման միջոցով բնակչության իրավունքների և շահերի հաշվառմամբ կենդանիների պահման համար համալիր միջոցառումների պլանավորման և կատարման նպատակով:
10. Կենդանիների հաշվառումն իրականացվում է դրանց ձեռքբերման պահից 15-օրյա ժամկետում:
11. Հաշվառման արդյունքում կարող է տրվել տիրապետողին գրանցման վկայական, որի հաշվառման մասին նշում է կատարվում կենդանիների հաշվառման գրքում:
12. Կենդանուն անհատականացման համար տրամադրելու դեպքում նշվում է կենդանու վզնոցի վրա:
13. Կենդանու հաշվառման ժամանակ տիրապետողը պարտադիր պետք է ծանուցվի կանոնների մասին, ինչը հավաստվում է տիրապետողի ստորագրությամբ: Տիրապետողն իրավունք ունի հաշվառող մարմնից անվճար տեղեկություններ ստանալ այն վայրերի մասին, որտեղ տիրապետողն իրավունք ունի կազմակերպել կենդանու զբոսանքը կամ արոտը, ինչպես նաև այն վայրերի մասին, որտեղ թույլատրված է կենդանիների թաղումը:
14. Կենդանու մահվան կամ սպանդի դեպքում կենդանու նախկին տիրապետողը պարտավոր է հաշվառող մարմին հանձնել գրանցման վկայականը, ինչի մասին նշում է կատարվում գրանցման գրքում:
15. Կենդանուն այլ անձի տիրապետությանը հանձնելու դեպքում նոր տիրապետողին են հանձնվում կենդանուն անհատականացնող համարի նշումով կենդանու վզնոցն ու գրանցման վկայականը՝ կենդանու հետագա վերահաշվառում իրականացնելու համար:
16. Գրանցման գրքում նշվում են հետևյալ տեղեկությունները՝
    1) գրառման հերթական համարը և հաշվառման տարեթիվը.
    2) տիրապետողի անունը, ազգանունը, բնակության հասցեն, անձնագրի տվյալները.
    3) կենդանու տեսակը, անունը, սեռը, գույնը, ցեղատեսակը, ծննդյան թիվը (եթե հայտնի է).
    4) գրանցման վկայականի տրամադրման ամսաթիվը և հերթական համարը.
    5) կենդանու անհատականացնող համարը.

6) տիրապետողի մոտ գտնվող կենդանիների թվաքանակը.
7) այլ տեղեկություններ:

17. Գրանցման վկայականի կորստյան դեպքում տիրապետողի դիմումի հիման վրա նրան տրվում է գրանցման նոր վկայական:

IV.Կենդանիներին պահելու, զբոսանքի իրականացման և վաճառքի պայմանները

18. Ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են կենդանիներին պահելիս հաշվի առնել այդ կենդանիների կենսաբանական և անհատական առանձնահատկությունները, պահպանել օրենսդրությունը, ինչպես նաև այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:
19. Բնակելի շենքերում կենդանիներ մշտապես կամ ժամանակավորապես պահելիս պետք է ապահովվեն մարդկանց և կենդանիների կյանքի բարենպաստ պայմաններ:
20. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքներում կենդանիներ պահելն արգելվում է:
21. Կենդանիների զբոսանքը թույլատրվում է միայն ամայի կամ խոտածածկ տարածքներում, բացառությամբ՝ կրթական, մշակութային, սպորտային, առողջապահական կազմակերպություններին (հիմնարկներին) հարող տարածքների, մանկական հրապարակների և շուկաների տարածքների:
22. Շների զբոսանքն իրականացնելու ժամանակ տիրապետողը պետք է ապահովի շրջապատող անձանց անվտանգությունը:
23. **Շների զբոսանքի ժամանակ տիրապետողը պարտավոր է՝**
    1) շանը տարածքից դուրս բերել կամ ներս տանել կապով, որի երկարությունը թույլ է տալիս հսկել շան վարքը: Մարդկանց և ուրիշ կենդանիներին սպառնացող շները (մարտական, ծառայողական, պարեկային և այլ ցեղատեսակի շներ, որոնք կարող են լինել ագրեսիվ և վտանգավոր մարդու կամ այլ կենդանու կյանքի կամ առողջության համար. **այսուհետ՝ ագրեսիվ շուն**) պետք է ունենան դնչկալներ.

    2) ագրեսիվ շանը պահել դնչկալով՝ մայթերով շարժման ժամանակ, հետիոտնի ճանապարհին, մարդաշատ վայրերում և երթևեկության հատման մասերում: Բնակելի թաղամասերում ագրեսիվ շների զբոսանքը թույլատրվում է իրականացնել միայն դնչկալի և կապի առկայության դեպքում, իսկ հասարակական վայրերում տիրապետողը պետք է ագրեսիվ շանը պահի կարճ կապի վրա և դնչկալով:
24. Ճանապարհը կամ երթևեկելի մասն անցնելիս, ինչպես նաև մայրուղիների մոտ՝ ճանապարհային պատահարների կանխման նպատակով, տիրապետողը պարտավոր է կենդանուն պահել կարճ կապի վրա:
25. Տիրապետողները պարտավոր են թույլ չտալ մայթերի կամ այլ հանրային օգտագործման տարածքների աղտոտումն կենդանու զբոսանքի ընթացքում, ինչպես նաև պարտավոր են մաքրել դրանց կենսագործունեության արդյունքները:
26. Շներ տիրապետողներն իրավունք ունեն դրանց ազատ արձակել միայն սեփականության, տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող հատուկ առանձնացված տարածքներում կամ մեկուսացված շինություններում:
27. Հասարակական վայրերում (խանութների հարևանությամբ, այգիներում, կայարաններում, գյուղատնտեսական արտադրանքի և սպառողական ապրանքների շուկաներում, տոնավաճառներում և այլն) կենդանիների վաճառքն արգելվում է:
28. Արգելվում է՝

2) կռիվների կամ ներկայացումների համար կենդանիների օգտագործումը, որոնց արդյունքում կենդանին կարող է տանջվել, ցավեցվել, վնասվել կամ սպանվել.
3) կենդանիների պահումը տրանսպորտային միջոցներում.
4) անհամատեղելի կենդանիների տեսակների միևնույն տարածքում բնակեցումը, որոնց միջև կարող է առաջանալ ագրեսիվություն.
5) շանը զբոսանքի տանելը մանկական հրապարակներում, առողջապահական, կրթական, մշակույթի, սպորտի հիմնարկների և շուկաների տարածքներում.
6) հարբած անձանց և 14 տարին չլրացած անչափահասներին շներին զբոսանքի տանելը.
7) կենդանիների հետ խանութներ, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների օբյեկտներ, բժշկական, կրթական և մշակութային հաստատություններ այցելելը:

V.Կենդանիների դիերի թաղումը և թափոնումը

29. Տիրապետողները իրավունք ունեն թաղելու և թափոնելու իրենց պատկանող կենդանիների դիերը հատուկ առանձնացված վայրերում՝ սահմանված սանիտարահիգիենիկ կանոններին համապատասխան:

VI.Կանոնները խախտելու պատասխանատվությունը

30. Սույն կանոնների խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2018թվական N 59-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետով , նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը , համայնքի ավագանին որոշում է `

1.Սահմանել ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները ` համաձայն հավելվածի :

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամ Արամյան

2.Գաբրիել Ավետիսյան

3.Մարտուն Գալստյան

4.Նարեկ Գրիգորյան

5.Արարատ Գասպարյան

6.Աշոտ Գրիրգորյան

7.Թամարա Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՄՅԱՆ

Ք. Թալին

26 դեկտեմբերի 2018թ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ավագանու
2018թ. դեկտեմբերի 26-ի թիվ 59-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արտաքին գովազդը (հետագայում՝ գովազդ) իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն է բնակավայրերում պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով անորոշ թվով անձանց շրջանում և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:
2. Սույն կարգն ու պայմանները տարածվում է Թալին համայնքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ենթակայության տակ գտնվող կամ նրա սեփականությունը հանդիսացող օբյեկտում կամ տարածքում տեղադրվող արտաքին գովազդի վրա:
3. Այն դեպքում, երբ գովազդը տեղադրվում է պետական կամ համայնքային սեփականություն չհանդիսացող տարածքներում, ապա գովազդ տեղադրելու համար համաձայնություն է տալիս տվյալ տարածքի սեփականատերը:
4. Գովազդատուի և տարածքի սեփականատիրոջ միջև հարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերով:
5. Գովազդի ծավալը, քանակությունը, տեղաբաշխման կարգը որոշում է տեղական ինքնակառավարման մարմինը՝ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ու «Գովազդի մասին» ՀՀ օրենքներով և սույն կանոններով:
6. Քաղաքաշինական խնդիրներից ու նպատակահարմարությունից ելնելով, և Թալին համայնքի արտաքին պատշաճ տեսքի ապահովման նպատակով, քաղաքաշինական խորհրդակցական մարմնի առաջարկների հիման վրա Թալին համայնքի ղեկավարը հաստատում է Թալին համայնքում գովազդային վահանակների կոնկրետ տեղադիրները, սահմանում այն կոնկրետ հասցեները, որտեղ արգելվում է գովազդի տեղադրումն ու գովազդի տեղադրման տեխնիկական պայմանները (չափորոշիչներ):
7. Շենքերի վրա կոնստրուկցիաներ օգտագործելու միջոցով գովազդի տեղադրման նախագծային փոփոխություններ առաջանալու դեպքում համայնքի ղեկավարի կողմից գովազդի տեղադրման թույլտվությունը տրվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Թալինի համայնքապետարանի հետ համաձայնեցված նախագծի առկայության դեպքում (հաշվի առնելով նախագծի հեղինակի կարծիքն ու փորձաքննության դրական եզրակացությունը):
8. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գովազդի տեղադրման թույլտվությունը համայնքի ղեկավարի կողմից տրվում է միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Գովազդային վահանակի հենասյունը հողի ծածկույթում կամ ծածկույթի վրա ամրացնելու համար պահանջվող հողատարածքը (մինչև 20քմ) համայնքի ղեկավարի կողմից հատկացվում է գովազդատուին ՀՀ Հողային օրենսգրքով սահմանված կարգով (առանց մրցույթի), իսկ 20քմ և ավելի մակերեսով հողատարածքի համար գովազդատուների դիմումների առկայության դեպքում Թալին համայնքի ղեկավարը (Թալինի համայնքապետարանի մրցութային հանձնաժողով)՝ հայտարարում է մրցույթ, և դրանից հետո միայն մրցույթի հաղթողին գովազդի տեղադրման թույլտվություն է տալիս:

9. Նույն հասցեում (տարածքում) մեկից ավելի գովազդատուների դիմումների առկայության դեպքում, համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ (ելեկտրային սակագին ընդունելով համայնքի ավագանու կողմից սահմանված գովազդային մակերեսի վարձավճարը, ինչպես նաև կարող են սահմանվել մրցութային այլ պայմաններ), որից հետո մրցույթի հաղթողին տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն:
10. Գովազդ տեղադրելու համար, համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջների, գովազդատուն գովազդային յուրաքանչյուր տեղի համար վճարում է տեղական տուրք, որը հաստատվում է համայնքի ավագանու կողմից:
11. Գովազդի տեղադրումը կարող է թույլատրվել, եթե այն համապատասխանում է ՀՀ «Գովազդի մասին» օրենքի և սույն կանոնների պահանջներին:
12. Սույն կանոնները չեն կարգավորում քաղաքական գովազդի հետ կապված հարաբերությունները:
13. Գովազդում օրենսդրության պահանջները չպահպանելը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

II. ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

14. Գովազդ տեղադրելու համար իրավունք ունի դիմել միայն գովազդատուն:
15. Գովազդ տեղադրելու համար գովազդատուն դիմում է համայնքի ղեկավարին՝ նշելով իր անվանումը, գտնվելու վայրը, գովազդի տեղադրման վայրը և ժամկետը, ինչպես նաև հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:
16. Գովազդատուն դիմումին կից ներկայացնում է իր նախաձեռնությամբ կազմված գովազդի էսքիզը, որտեղ նշվում են գովազդի արտաքին չափերը, պատրաստման համար օգտագործվող նյութերը, գովազդի տեղաբաշխման ձևը (պլակատ, վահանակ և այլն) և տեխնիկական լուծումները, գովազդի պատկերը՝ համապատասխան գույներով և գրառումներով ու տարածքի սեփականատիրոջ գրավոր համաձայնությունը, որի վրա (կամ օգտագործմամբ) նախատեսվում է տեղադրել գովազդը, եթե տարածքի սեփականատերը պետությունը կամ համայնքը չէ: Գովազդի էսքիզը համաձայնեցվում է Թալինի համայնքապետարանի հետ:
17. Դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում, իսկ մրցույթով գովազդի տեղադրման թույլտվությունը տալու դեպքում մեկամսյա ժամկետում, պարզվում է գովազդի համապատասխանությունը «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, սույն կանոնների պահանջներին և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղադիրներին և չափորոշիչներին, որից հետո գանձելով սահմանված չափի տեղական տուրք, համայնքի ղեկավարը կայացնում է որոշում գովազդ տեղադրելու թույլտվություն տալու մասին և կնքվում է գովազդային վահանակի ժամանակավոր հողօգտագործման պայմանագիր:
18. Թույլտվությունը տրվում է մինչև մեկ տարի ժամկետով, գովազդատուի անունով:
19. Գովազդ տեղադրելու դիմումը կարող է մերժվել, եթե.
    1) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում «Գովազդի մասին» ՀՀ օրենքի և սույն կանոնների պահանջներին ու չափորոշիչներին.
    2) գովազդի համար պահանջվող տարածքն արդեն իսկ զբաղեցված է այլ գովազդով, կամ նախատեսվում է օգտագործել (զբաղեցնել) պետական (համայնքային) նշանակության որևէ ծրագրով:
20. Գովազդ տեղադրելու հայտը մերժելու վերաբերյալ որոշման մեջ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու հիմքերը:
21. Գովազդ տեղադրելու հայտում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և նման այլ բացթողումներ) առկայության դեպքում համայնքի ղեկավարը կարող է այն բավարարել վերապահումով, այսինքն՝ հայտատուին գովազդի տեղադրման թույլտվությունը կտրվի դրանց վերացման դեպքում:
22. Թույլտվությունը և գովազդային վահանակի ժամանակավոր հողօգտագործման պայմանագիրը չի կարող գովազդատուի կողմից փոխանցվել կամ օտարվել այլ անձի:

23. Գովազդատուն գովազդը պարտավոր է տեղադրել միայն թույլտվությամբ սահմանված պայմանների պահպանմամբ, որոշված տեղում և գովազդի էսքիզին խիստ համապատասխան:
24. Թալին համայնքում գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնում է համայնքի ղեկավարը:
25. Գովազդատուի կողմից անբարեխիղճ գովազդ թույլ տալու դեպքում, համայնքի ղեկավարը գովազդի մասին օրենսդրության խախտման դադարեցման և հակագովազդի իրականացման մասին գրավոր տեղեկացնում է համայնքի գովազդատուին :
26. Համայնքի ղեկավարը, ՀՀ «Գովազդի մասին» օրենքի խախտումներով տեղադրված գովազդների վերաբերյալ գրավոր տեղեկացնում է Արագածոտնի մարզպետարանին:
27. Գովազդի թույլտվության ժամկետը լրանալու կամ գովազդատուի համաձայնության դեպքում, գովազդատուն պարտավոր է սահմանված ժամկետում, իսկ այդպիսին սահմանված չլինելու դեպքում ողջամիտ ժամկետում սեփական միջոցներով և իր հաշվին վերացնել գովազդը և դրա տեղադրման միջոցները, իսկ օգտագործված տարածքը բերել նախկին վիճակին:

    Գովազդատուի կողմից սույն կետով նախատեսված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, այդ աշխատանքները իրականացնում է համայնքապետարանը:
28. Գովազդատուի կողմից թույլտվությամբ սահմանված կանոնները խախտելու դեպքում, եթե համայնքի ղեկավարի կողմից նախազգուշացվելուց հետո 10-օրյա ժամկետում խախտումները գովազդատուն չի վերացնում, ապա համայնքի ղեկավարը գովազդ տեղադրելու թույլտվությունը և պայմանագիրը կարող է առանց փոխհատուցումների ուժը կորցրած ճանաչել:
29. Գովազդատուները իրավասու են օրենքին համապատասխան դատական կարգով բողոքարկել գովազդի տեղադրման վերաբերյալ ընդունված որոշումներն ու գործողությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2018թվական N 60-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով , <<Հավաքների ազատության մասին >> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը , համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի համայնքապետարանում հավաքների իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն հավելված 1-ի :

2.Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի համայնքապետարանում հավաքների իրազեկումների գրանցամատյանի վարման ձևը՝ համաձայն հավելված 2-ի :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամ Արամյան

2.Գաբրիել Ավետիսյան

3.Մարտուն Գալստյան

4.Նարեկ Գրիգորյան

5.Արարատ Գասպարյան

6.Աշոտ Գրիրգորյան

7.Թամարա Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՄՅԱՆ

Ք. Թալին

26 դեկտեմբերի 2018թ

Հավելված 1
ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ավագանու
2018թ. սեպտեմբերի 26-ի թիվ 60-Ա որոշման

ԿԱՐԳ

ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

1. Հավաքի կազմակերպչի կողմից ստացված հավաքի իրազեկման փաստաթղթերը ընդունվում է Թալինի համայնքապետարանի աշխատակազմում:
2. Հավաքի կազմակերպչի կողմից ստացված հավաքի իրազեկման փաստաթղթերը Թալինի համայնքապետարանի աշխատակազմում ընդունվելուց հետո համապատասխան աշխատակիցը այն մուտքագրում է և մտից համարը, մուտքագրման օրը, ամիսը, տարին և ժամը, հավաքի կազմակերպչի մասին տվյալները և հավաքի համառոտ բովանդակությունը անհապաղ նշում է հավաքների իրազեկումների գրանցամատյանում:
3. Հավաքի կազմակերպչի կողմից ստացված հավաքի իրազեկման փաստաթղթերը Թալինի համայնքապետարանի աշխատակազմում ընդունվելուց հետո Թալին համայնքի ղեկավարը անհապաղ տալիս է հանձնարարական, որպեսզի նախապատրաստվի ոստիկանություն ուղարկվող ելից գրություն հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով:
4. Ոստիկանությանը հասցեագրված հավաքի անցկացման վերաբերյալ կարծիքը ստանալու վերաբերյալ գրությունը ստորագրելուց հետո համայնքապետարանի համապատասխան աշխատակիցը անհապաղ այն առաքում է ոստիկանություն և այդ մասին գրառում է կատարում Թալինի համայնքապետարանում հավաքների իրազեկումների գրանցամատյանում:
5. Ոստիկանության կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիքը ստանալուց հետո այդ մասին անհապաղ գրառում է կատարվում Թալինի համայնքապետարանում հավաքների իրազեկումների գրանցամատյանում:
6. Ոստիկանության կողմից հավաքի անցկացման վերաբերյալ պատասխան գրությունը Թալին համայնքի ղեկավարը մակագրում է աշխատակազմի քարտուղարին՝ իրավական ակտի նախագիծը նախապատրաստելու համար:
7. Թալին համայնքի ղեկավարի իրավական ակտը ընդունվելուց հետո համայնքապետարանի համապատասխան աշխատակիցը անհապաղ այդ մասին գրառում է կատարում Թալինի համայնքապետարանում հավաքների իրազեկումների գրանցամատյանում ու այն ուղարկվում է հավաքի կազմակերպչին և այդ մասին գրառում է գրանցամատյանում:
8. Թալինի համայնքի ղեկավարը իրավական ակտը կազմակերպչին ուղարկվելուց հետո համայնքապետարանի համապատասխան աշխատակիցը հետևում է իրավական ակտի պահանջների կիրարկման ընթացքին և դրա մասին գրառում է կատարում հավաքների իրազեկումների գրանցամատյանում:

Հավելված 2
ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ավագանու
2018թ. սեպտեմբերի 26-ի թիվ 60-Ա որոշման

ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ՁԵՎ

Հ/Հ	Մտից համարը	Հավաքի իրազեկման փաստաթղթի մուտքագրման օրը, ամիսը, տարին, ժամը	Հավաքի կազմակերպիչը	Հավաքի հառոտ բովանդակությունը	Իրազեկումը ոստիկանության ուղարկելու օրը, ամիսը, տարին, ժամը	Ոստիկանության կարծիքը	Ընդունված իրավական ակտը	Իրավական ակտի առաքման օրը, ամիսը, տարին, ժամը	Ծանոթություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2018թվական N 61-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետով, նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը , համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին համայնքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամ Արամյան

2.Գաբրիել Ավետիսյան

3.Մարտուն Գալստյան

4.Նարեկ Գրիգորյան

5.Արարատ Գասպարյան

6.Աշոտ Գրիրգորյան

7.Թամարա Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՍՅԱՆ

Ք. Թալին

26 դեկտեմբերի 2018թ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ավագանու
2018թ. դեկտեմբերի 26-ի թիվ 61-Ն որոշման

ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն կանոնի օգտագործվող հանրային սննդի ծառայության հիմնական հասկացություններն են՝

հանրային սնունդ (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպում.

հանրային սննդի ծառայություն՝ սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր.

խոհարարական արտադրանք՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսապատրաստվածքների համախումբ.

ճաշացուցակ՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակ, որը վաճառողն առաջարկում է սպառողին՝ զանգվածի գնի նշումով.

հանրային սննդի օբյեկտներ՝ հանրային սննդի ծառայության իրականացման համար կառուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք, շինություն կամ այլ վայր.

վաճառող՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն աշխատանքներ է կատարում խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպման ուղղությամբ:

II. ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են հետևյալ տեսակների՝ ճաշարաններ, ռեստորաններ, սրճարաններ, բարեր, բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ:
2. Հանրային սննդի ծառայություններն իրականացնում են իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:
3. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով և հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:
4. Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցանակներ, սանհանգույցներ:

5. Հանրային սննդի օբյեկտներում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցնովի վաճառքը:
6. Ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:
7. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:

III. ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏԻ ՎԱՃԱՌՈՂԻՆ ԵՎ ԱՇԽԱՏՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Վաճառողը պարտավոր է ապահովել սույն կանոնի II-րդ բաժնի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դրույթների պահանջների կատարումը:
2. Վաճառողն ինքնուրույն է որոշում սպառողներին սպասարկելու ձևերը և մեթոդները:
3. Վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ, որը ներկայացվում է սպառողին (գնորդին): Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և վերջինիս այն գինը, որը ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման:
4. Վաճառողը յուրաքանչյուր աշխատողին ապահովում է իր ստորագրությամբ հաստատված անվանաքարտով՝ աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և ազգային ստանդարտին համապատասխան պաշտոնի նշմամբ:
   Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողը պարտավոր է կրել անվանաքարտ՝ իր լուսանկարով, անվան, ազգանվան և անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարի նշմամբ:
   Անվանաքարտ կրելու կարգը հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը:
5. Վաճառողն ապահովում է հանրային սննդի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստ կրելը:

IV. ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով սահմանվում է Թալին համայնքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն (այսուհետ՝ թույլտվություն) տալու կարգը:
2. Թույլտվությունը՝ տրվում է համայնքի ղեկավարի կողմից:
3. Թույլտվություն ստանալու համար իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ հայտատու) համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտ:
4. Թույլտվություն տալու մասին հայտի բավարարումը ձևակերպվում է համայնքի ղեկավարի որոշմամբ:
5. Թույլտվություն տալու հետ միաժամանակ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, հայտատուից գանձվում է տեղական տուրք:

6. Տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագիրն ստանալուց հետո 3 օրվա ընթացքում հայտատուին է հանձնվում հաստատված թույլտվությունը, որը տրվում է հայտատուի կողմից վճարված տեղական տուրքին համապատասխանող ժամկետով՝ վճարման օրվանից (եթե հայտատուի կողմից այլ ժամկետ չի նշվում):
7. Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժվում է, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված: Թույլտվություն ստանալու մասին հայտը գրավոր մերժվում է հայտի մուտքագրման օրվանից երկու օրվա ընթացքում: Թույլտվություն ստանալու մասին հայտի մերժման վերաբերյալ որոշման մեջ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:
8. Սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետում հայտը չմերժվելու դեպքում այն համարվում է բավարարված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2018թվական N 62-Ն

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ կետի և <<Բյուջետային համակարգի մասին>>
ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով, **համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հաստատել Թալին համայնքի 2019թ-ի տարեկան բյուջեն

- եկամուտների մասով - 163256.7 հազ դրամ
- ծախսերի մասով - 163256.7 հազ դրամ
- հավելուրդի մասով - 5500 .0 հազ դրամ

2.Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի :

3.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:

4.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:

5.Հաստատել բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը(պակասորդը)՝ համաձայն հատված 4-ի:

6.Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասորդի)ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հատված 5-ի:

7. Հաստատել բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:

8.Ծախսերի ֆինանսավորումը կատարել ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:

9.<<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն թույլատրել համայնքի ղեկավարին կատարել ծախսային հոդվածների հաստատված ծավալների 15%-ը չգերազանցող վերաբաշխումներ:

10. Սոցիալական պաշտպանության բնագավառի ծախսերը կատարել համաձայն համայնքի ավագանու 26.12.2018թ. N 66-Ա որոշմամբ սահմանված չափորոշիչների, համայնքի ղեկավարի կարգադրությամբ : Կանխիկ դրամի վճարումը կատարել համայնքապետարանի դրամարկղի միջոցով :

11. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2019թ-ի հունվարի 1-ից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամ Արամյան

2.Գաբրիել Ավետիսյան

3.Մարտուն Գալստյան

4.Նարեկ Գրիգորյան

5.Արարատ Գասպարյան

6.Աշոտ Գրիրգորյան

7.Թամարա Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՄՅԱՆ

Ք. Թալին
26 դեկտեմբերի 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2018թվական N 63-Ա

ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՔՆԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ և ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ , ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի դրույթներով , **համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հաստատել 2019թ-ի համայնքապետարանի աշխատակազմի և ՀՈԱԿ-ների կառուցվածքը , աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն 1-8 հավելվածների:

2. Թալինի համայնքապետարանի աշխատակազմում և ՀՈԱԿ-ներում նվազագույն աշխատավարձը հաշվարկել մինչև 1974թ. ծնվածների համար 72752 դրամի, 1974թ-ից հետո ծնվածների համար՝ 77904 դրամի հաշվով:

3.Դիմել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն , համայնքապետարանի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություն կատարելու՝ 2.3-8 ծածկագրով գլխավոր մասնագետի / սոցիալական աշխատողի / հաստիքը առաջատար մասնագետ հաստատելու համար :

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2019թ.-ի հունվարի 1-ից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամ Արամյան

2.Գաբրիել Ավետիսյան

3.Մարտուն Գալստյան

4.Նարեկ Գրիգորյան

5.Արարատ Գասպարյան

6.Աշոտ Գրիրգորյան

7.Թամարա Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՄՅԱՆ

Ք. Թալին
26 դեկտեմբերի 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2018թվական N 64-Ա

ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի , 77-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով , համաձայն համայնքի ղեկավարի 06.11.2018թ. N-40 կարգադրության , հիմք ընդունելով գույքագրման հանձնաժողովի եզրակացությունը համայնքի ավագանին որոշում է՝

1.Դուրս գրել Թալինի համայնքապետարանի և ՀՈԱԿ-ների օգտագործման ոչ պիտանի գույքը համաձայն N - 1 հավելվածի :

2.Հաստատել Թալինի համայնքապետարանի և ՀՈԱԿ-ների ամենամյա գույքագրման ցուցակները կատարված փոփոխություններով , համաձայն 2-11 հավելվածների :

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամ Արամյան

2.Գաբրիել Ավետիսյան

3.Մարտուն Գալստյան

4.Նարեկ Գրիգորյան

5.Արարատ Գասպարյան

6.Աշոտ Գրիգորյան

7.Թամարա Գևորգյան

Ն ՈՐՈՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՄՅԱՆ

Ք. Թալին

26 դեկտեմբերի 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2018թվական N 65-Ն

<< ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> 21.11.2018Թ. N 53-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի , 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի և 37-րդ հոդվածի դրույթներով ; հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը , համայնքի ավագանին որոշում է `

1. Հաստատել Թալին համայնքի 2018թ.տարեկան բյուջեն `

__ եկամուտների մասով – 166303.1 հազ. դրամ

__ծախսերի մասով - 166303.1 հազ. դրամ

__հավելուրդի մասով - 5898.3 հազ. դրամ

2.Թալին համայնքի ավագանու 21.11.2018թ. N 53-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն համաձայն հավելվածի :

3.Հաստատել Թալին համայնքի 2018թ.տարեկան բյուջեն կատարված փոփոխություններով , համաձայն 1-6 հատվածների ;

4.Ուժը կորցրած ճանաչել Թալին համայնքի ավագանու 21.11.2018թ. N 53-Ն որոշման 1-ին , 2-րդ և 3-րդ կետերը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՄՅԱՆ

Ք. Թալին
26 դեկտեմբերի 2018թ.

Հավելված

Թալինի քաղաքային համայնքի ավագանու

2018 թ. դեկտեմբերի 26 -ի թիվ 65 - Ն որոշման

ա)2018թ. տարեկան ճշտված բյուջեի եկամտային մասում կատարել հետևյալ փոփոխությունները

Անվանումը	Տարեկան հաստատված բյուջեով	Կատարված փոփոխություն		Տարեկան ճշտված բյուջե
		ավելացում	պակասեցում	
				0.0
				0.0
				0.0

բ)2018թ. տարեկան ճշտված բյուջեի ծախսային մասում ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման

Անվանումը	Տարեկան հաստատված բյուջեով	Կատարված փոփոխություն		Տարեկան ճշտված բյուջե
		ավելացում	պակասեցում	
Կառավարման ապարատ 01.1.1 4112	450.0	650.0		1100.0
Կառավարման ապարատ 01.1.1 4212	3300.0		350.0	2950.0
Կառավարման ապարատ 01.1.1 4235	300.0		300.0	0.0
Կառավարման ապարատ 01.1.1 4239	90.0		50.0	40.0
Կառավարման ապարատ 01.1.1 4261	440.0		60.0	380.0
Կառավարման ապարատ 01.1.1 4823	1295.5		100.0	1195.5
Այլ մշակութ.կազմակերպութ.08.2.4 4239	200.0		100.0	100.0
Այլ մշակութ.կազմակերպութ.08.2.4 4269	900.0		150.0	750.0
Կոմ.ծառայություն 06.1.1 4511	11500.0	210.0		11710.0
Աղբահան.և սան.մաքրում 05.1.1 4511	14550.0	250.0		14800.0

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամ Արամյան

2.Գաբրիել Ավետիսյան

3.Մարտուն Գալստյան

4.Նարեկ Գրիգորյան

5.Արարատ Գասպարյան

6.Աշոտ Գրիգորյան

7.Թամարա Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2018թվական N 66-Ա

<<ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>17.08.2017Թ. N 30-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ կետով և 37-րդ կետով , համայնքի ավագանին որոշում է՝
Թալին համայնքի ավագանու 17.08.2017թ. << Թալին համայնքում սոցիալական օգնության տրամադրման չափորոշիչներ սահմանելու մասին >> N 30-Ա որոշումը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետի, 18-րդ հոդվածի 7-րդ կետի և 48-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի պահանջներով , **համայնքի ավագանին որոշում է՝**
1.Թալին համայնքում սահմանել սոցիալական օգնության տրամադրման հետևյալ չափորոշիչները՝

1) 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձինք - **20000 դրամ**
2) 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք - **10000 դրամ**
3) 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք - **5000 դրամ**
4.) Հայրենական մեծ պատերազմիմասնակիցներև նրանց հավասարեցված անձինք- **10000դրամ**
5) Հաշմանդամություն ունեցող երեխաներ՝ մինչև 18 տարեկան - **5000դրամ**
6) Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ՝ մինչև 18 տարեկան, և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք՝ 18-23 տարեկան- - **10000դրամ**
7) Հաշմանդամություն ունեցող անձանցից բաղկացած ընտանիքների երեխաներ՝ մինչև 18 տարեկան -**5000դրամ**
8) Բազմազավակ (մինչև 18 տարեկան 4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների երեխաներ- **10000դրամ**
9) Միածնող երեխաներ՝ մինչև 18 տարեկան - **10000դրամ**
10) Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի ուղեգրով լրացուցիչ բժշկական հետազոտության ենթարկվողներ- **5000դրամ**
11) 14-15 տարեկան արական սեռի, նախազորակոչային և զորակոչային տարիքի անձինք (հիվանդանոցային բժշկական օգնություն, իսկ զորակոչային տարիքի անձանց՝ նաև հիվանդանոցային փորձաքննություն) - 5000դրամ

12) Զինծառայողներ և նրանց հավասարեցված անձինք, նրանց ընտանիքների անդամներ,- Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներ, երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողներ- **15000դրամ**

13) Փրկարարական ծառայողներ և նրանց ընտանիքների անդամներ, կենսաթոշակի անցնելու կապակցությամբ ազատված փրկարարական ծառայողներ, հաշմանդամ դարձած փրկարարական ծառայողներ, ծառայության ընթացքում զոհված (մահացած) փրկարարական ծառայողների ընտանիքների անդամներ-5000դրամ

14) Բռնադատվածներ - **5000դրամ**

15) Չեռնոբիլի ատոմակայանի վթարի վերացման աշխատանքների մասնակիցներ-**5000դրամ**

16) Ապաստան հայցողներն ու նրանց ընտանիքների անդամները-**5000դրամ**

17) Միայնակ թոշակառուներ -**5000դրամ**

18)Սոցիալական օգնության կարիք ունեցող այլ խմբեր -**5000 դրամ**

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից

Կողմ -7 Դեմ -0 Չեռնպահ -0

1.Արամ Արամյան

2.Գաբրիել Ավետիսյան

3.Մարտուն Գալստյան

4.Նարեկ Գրիգորյան

5.Արարատ Գասպարյան

6.Աշոտ Գրիգորյան

7.Թամարա Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՍՅԱՆ

Ք. Թալին

26 դեկտեմբերի 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2018թվական N 67-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՈՒՆ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով , նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը ,համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին համայնքի վարչական սահմաններում գտնվողանշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամ Արամյան

2.Գաբրիել Ավետիսյան

3.Մարտուն Գալստյան

4.Նարեկ Գրիգորյան

5.Արարատ Գասպարյան

6.Աշոտ Գրիրգորյան

7.Թամարա Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՄՅԱՆ

Ք. Թալին
26 դեկտեմբերի 2018թ.

ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ավագանու
2018թ. դեկտեմբերի 26-ի թիվ 67-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Թալին համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ և /կամ/ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):
2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Թալին համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:
3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:
4. Համայնքի ղեկավարի (կամ նրա կողմից լիազորված կազմակերպության) և Թալին համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ և /կամ/ տիրապետողի հետ կնքվում է պայմանագիր (համաձայնագիր), որում սահմանվում են սեփականատիրոջ և /կամ/ տիրապետողի տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները՝ կցելով բարեկարգման տարածքի ուրվագիծը:
5. Համայնքի վարչական (բնակավայրի) տարածքի բարեկարգման և սանիտարական մաքրման համայնքային սխեման ըստ բնակավայրերի կազմում և հաստատում է համայնքի ղեկավարը:
6. Սույն կարգը տարածվում է Թալին համայնքի վարչական տարածքում տեղակայված /գտնվող/՝
   1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա.
   2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա.
   3) այգիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների վրա.
   4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի սեփականատերերի և տիրապետողների վրա.
   5) բացօթյա շուկաների և տոնավաճառների սեփականատերերի և տիրապետողների վրա:
7. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման աշխատանքները և մաքրության պահպանումը.
2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը.
3) անհրաժեշտ լուսավորություն՝ անշարժ գույքի մուտքի համար.
4) շենքերին ու շինություններին հարակից բակային տարածքների կանաչապատում.
5) թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց, ճաղեր և այլն) ցանկապատում և դրանց փոխում, փոխարինում.

8.Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը:

9.Բարեկարգման աշխատանքների կազմակերպման համար անշարժ գույքի սեփականատերերի և տիրապետողների կողմից կարող են կատարվել տարածքների չափագրում, կազմվել անհրաժեշտ աշխատանքների ցանկ, իսկ վերականգնման, նորոգման, փոխարինման աշխատանքների դեպքում՝ թերությունների մասին արձանագրություն:

10.Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ միայն կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում.
2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում.
3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գունային փոփոխություններ,
4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ.
5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

11.Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են համայնքի ղեկավարի կողմից համաձայնեցված ճարտարապետական կամ ձևավորման նախագծին համապատասխան:

12.Պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցների ճակատների վերակառուցումը և նորոգումն իրականացվում է հուշարձանների պահպանության պետական լիազոր մարմնի համաձայնությամբ: Ընդ որում՝ պետական լիազոր մարմնի կողմից կարող են տրվել նորոգման կամ վերակառուցման լուծումների վերաբերյալ հանձնարարականներ, որոնք ներառվում են Թալինի համայնքապետարանի կողմից տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում:

13.Թալինի համայնքապետարանի համապատասխան բաժնի կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ շենքի ճակատների վերականգնման կամ նորոգման աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

14.Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով և շահագործվեն սահմանված պահանջներին համապատասխան.

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.
ա. ապահոված լինի տեսանելի մաքրությունը և անհրաժեշտ թվաքանակով աղբարկղերի առկայությունը,
բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը,
գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտ-բետոնե ծածկերը և /կամ/ սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառուցի կուտակումներից,
դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել ճանապարհի երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում կամ ճամփեզրին,
ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձնից և սառույցից:

15.Թալին համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

16.Կանաչապատման աշխատանքները ենթակա են պարտադիր կատարման միայն Թալինի համայնքապետարանի աշխատակազմին , ներկայացված ֆիտոնախագծի հաստատումից հետո:

17.Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն համաձայնեցնում է Թալինի համայնքապետարանի հետ: :

18.Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

19.Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա դրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

20.Այն դեպքում, երբ հատկացված հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա պարտադիր բարեկարգման և մաքրման է ենթակա այն տարածքը, որը փաստացի տիրապետվում է անշարժ գույքի տիրապետողի կողմից:

21.Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, բնակչության կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ինչպես նաև առևտրի այլ օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.

2) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.

3) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծով՝ միչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.

4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի համար՝ հատկացված և/կամ/ զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից 10-50 մետր (կախված օբյեկտի տարողականությունից և հզորությունից).

5) արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 50 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.

6) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 10 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.

7) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցված տարածքի պարագծից 50-100 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2018թվական N 68-Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ՝ 10 ԿՎՏ ԵՎ Գ. ԱՎԴԱԼՅԱՆ Ի ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ ՀՈԱԿ-Ի ՝ 5 ԿՎՏ , ՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ԿՆՔՎԵԼԻՔ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղադրման ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի պահանջներով , համայնքի ավագանու 28.09.2018թ. N-41-Ա որոշման համաձայն , համայնքի ավագանին որոշում է ՝

Տալ համաձայնություն Թալին համայնքի կարիքների համար ՝

1.Թալին համայնքում /թիվ 3 մանկապարտեզ ՀՈԱԿ –ի ՝ 10 կվտ և մարզադպրոց ՀՈԱԿ-ի ՝ 5կվտ , տանիքներին / արևային ֆոտովոլտային կայանի /կառուցման տեղադրման աշխատանքների իրականացման համար կնքել 5889720 ՀՀ դրամ գումարի չափով և 5 տարի ժամկետով կապալի պայմանագիր :

2.Վերը նշված կապալի պայմանագրից բխող պահանջի իրավունքի զիջման /ֆակտորինգի / դեպքում ստանձնել 9/ինը / տոկոսի չափով ֆակտորինգի միջնորդավճարի վճարման պարտավորությունը , որը հաշվարկվելու է օրական ՝ ֆինանսավորման մնացորդային գումարի վրա :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամ Արամյան

2.Գաբրիել Ավետիսյան

3.Մարտուն Գալստյան

4.Նարեկ Գրիգորյան

5.Արարատ Գասպարյան

6.Աշոտ Գրիրգորյան

7.Թամարա Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՄՅԱՆ

Ք. Թալին
26 դեկտեմբերի 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2018թվական N 69-Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ Գ.ԱՎԴԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ ՀՈԱԿ-ՈՒՄ ՝ ԱՐԵՎԱՅԻՆ ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ԿՆՔՎԵԼԻՔ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղադրման ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի պահանջներով , համայնքի ավագանու 28.09.2018թ. N-41-Ա որոշման համաձայն , համայնքի ավագանին որոշում է ՝
Տալ համաձայնություն Թալին համայնքի կարիքների համար ՝

1.Թալին համայնքի Գ.Ավդալյանի անվան մարզադպրոց ՀՈԱԿ-ում արևային ջրատաքացուցիչի տեղադրման աշխատանքների իրականացման համար կնքել 1296000 ՀՀ դրամ գումարի չափով և 5 տարի ժամկետով կապալի պայմանագիր :
2.Վերը նշված կապալի պայմանագրից բխող պահանջի իրավունքի զիջման /ֆակտորինգի / դեպքում ստանձնել 9/ինը / տոկոսի չափով ֆակտորինգի միջնորդավճարի վճարման պարտավորությունը , որը հաշվարկվելու է օրական ՝ ֆինանսավորման մնացորդային գումարի վրա :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամ Արամյան

2.Գաբրիել Ավետիսյան

3.Մարտուն Գալստյան

4.Նարեկ Գրիգորյան

5.Արարատ Գասպարյան

6.Աշոտ Գրիրգորյան

7.Թամարա Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՄՅԱՆ

Ք. Թալին
26 դեկտեմբերի 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2018թվական N 70-Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ Թ. ԿՐՊԵՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ԿՆՔՎԵԼԻՔ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղադրման ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի պահանջներով , համայնքի ավագանու 28.09.2018թ. N-41-Ա որոշման համաձայն , համայնքի ավագանին որոշում է `

Տալ համաձայնություն Թալին համայնքի կարիքների համար `

1.Թալին համայնքի կարիքների համար Թալին համայնքի Թ. Կրպեյան փողոցի գիշերային լուսավորության կառուցման >> աշխատանքներ >> -ի իրականացման համար կնքել 3324000 ՀՀ դրամ գումարի չափով և 5 տարի ժամկետով կապալի պայմանագիր :

2.Վերը նշված կապալի պայմանագրից բխող պահանջի իրավունքի զիջման /ֆակտորինգի / դեպքում ստանձնել 9/ինը / տոկոսի չափով ֆակտորինգի միջնորդավճարի վճարման պարտավորությունը , որը հաշվարկվելու է օրական ` ֆինանսավորման մնացորդային գումարի վրա :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամ Արամյան

2.Գաբրիել Ավետիսյան

3.Մարտուն Գալստյան

4.Նարեկ Գրիգորյան

5.Արարատ Գասպարյան

6.Աշոտ Գրիրգորյան

7.Թամարա Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՄՅԱՆ

Ք. Թալին
26 դեկտեմբերի 2018թ.